«Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.12.2020թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի փոքր դահլիճում 2020 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Քոչարյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Հ. Մեսրոպյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ա. Համբարձումյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 204 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Հ. Մեսրոպյանին:

Զեկույց (Հովիկ Մեսրոպյան)- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնին ներկայացվել է դիմում-հայտ՝ Կապան համայնքի տարածքում նախատեսվող մասնավոր գերեզմանատան շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ: Արդեն իսկ կայացել է 1-ին հանրային քննարկումը, համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը՝ տվյալ տարածքում իրականացվելիք գերեզմանատան կառուցմանը: Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի, որը կընթանա երկու փուլով՝ նախնական փուլ և հիմնական փուլ: Նախնական փուլով իրականացվելու է երկու հանրային քննարկում, որից առաջինը արդեն իրականացվել է: Այսօրվա 2-րդ լսումից հետո կտրվի տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա կկազմվի շմագ հաշվետվություն: Այնուհետ կիրականացվի 3-րդ հանրային

քննարկումը՝ համայնքի հետ համատեղ, որից հետո 4-րդը ու կտրվի համապատասխան եզրակացություն՝ դրական կամ բացասական: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության և մշակույթի, պաշտպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունները և Սյունիքի մարզպետարանը: Ստացված կարծիքների և դիտողությունների հիման վրա հայտը լրամշակվել և ներկայացվել է փորձաքննական կենտրոն: Բնապահպանական մասով՝ տվյալ տարածքում Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Տվյալ տարածքը հատուկ պահպանվող տարածք չէ, անտառային տարածք չէ, հուշարձաններ չկան: Ցանկացած գործունեություն իրականացնելիս՝ լինի դա հասարակական կառուցապատում կամ հանքարդյունաբերություն, կամ նման գործունեություն շրջակա միջավայրի վրա որոշակի բացասական առումով ներգործություն կունենա, բայց կոնկրետ Կապանի գերեզմանատան նախնական գնահատման հայտում մշակվել են բնապահպանական միջոցառումներ, որոնք կմեղմացնեն բնապահպանական ազդեցությունները: Օրինակ՝ աշխատանքների ընթացքում փոշեառաջացումը կանխելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել ջրցան, նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձր թաղանթով, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

Առաջարկություն (Վլադիկ Մարտիրոսյան)- Փոշիների կլանման միջոցառումներից բացի, առաջարկում եմ կատարել նաև պաշտպանիչ անտաշերտի ստեղծում՝ ծառատունկ:

Պատասխան (Հովիկ Մեսրոպյան)- Տվյալ գերեզմանատան համար սանիտարապաշտպանիչ գոտին պաշտպանվում է, այն 300 մ է: Այո՛, ավելի լավ կլինի, թող իրականացվի նաև ծառատունկ:

Զեկույց (Արմենակ Սիմոնյան)- Նախագիծը և պրոյեկտը գծվել է ըստ օրենքի: Ընդհանուր՝ 3,7 հա, պրոյեկտը կատարվել է 1 հեկտարի կտրվածքով: Գերեզմանատների չափերը՝ 3×4, գերեզմանների միջև հեռավորությունները՝ 1մ և 80 սմ: Նախատեսված է նաև մեքենաների մուտքը դեպի գերեզմանատներ ճանապարհ, որի լայնությունը 3 մ է: Նախատեսվել է նաև դատարկ հատված պրոյեկտում, բայց ցանկալի կլինի, որ բոլորը 3×4, նույն ձևով լինեն: Նախատեսված է 100 քմ հոգեհանգստի սրահ (24×10), 50 քմ սպասասրահ, հանգուցյալի պահման սառնարան, բուժկետ, սանհանգույց, պահակակետ, ծաղկի և խնկի վաճառքի սենյակ:

Հարց (Նորայր Հարությունյան)- Տարածքի սպասարկումը, մաքրումը կատարվելու է ընկերության կողմից:

Պատասխան (Արմենակ Սիմոնյան)- Այո՛, «Ռիտուալ» ՍՊԸ կողմից նախատեսված է:

Լրացում (Նորայր Հարությունյան)- Շատ լավ նախաձեռնություն է, համահավասար բաժանում է կատարված: Շատ լավ է, որ ճոխություն թույլ չենք տալիս: Լավ է նաև, որ ընկերությունը ծառայություններ է մատուցելու: Գովելի է նաև, որ կլինի ցանկապատ, որի արդյուքում կենդանիների մուտքը տվյալ տարածք կբացառվի: Նաև շատ լավ է, որ քաղաքից բավականին հեռու է գտնվում:

Հարց (Ավետիք Համբարձումյան)- Սպասարկման համար վճարներ իրականացվելու են:

Պատասխան (Հովհաննես Գևորգյան)- Դա առայժմ քննարկվում է, պարզ չէ:

Հարց (Վլադիկ Մարտիրոսյան)- Եթե դիակիզարան չունենք, ապա ինչ սափորների մասին է խոսքը:

Պատասխան (Արմենակ Սիմոնյան)- Դա օրենքով է նախատեսված, որ գերեզմանները ունենան սափորատեղեր:

Կարծիք (Վլադիկ Մարտիրոսյան)- Մեր քաղաքում վաղուց դրա պահանջը կար: Բարաբաթումի գերեզմատունը փակ է, Սյունիքի գերեզմանատունը նույնպես լցված է, տեղ չունի և խնդիր է առաջանում հանգուցյալների հուղարկավորության ժամանակ: Անձամբ ողջունում եմ այս աշխատանքները: Տարածքը հարմար է, խմելու ջրի հետ կապ չունեցող տարածք է, բնակավայրերից բավականին հեռու է, հատուկ պահպանվող տարածք չէ: Ողջունելի է նաև, որ նախագծում ամեն ինչ բոլորին համահավասար սկզբունքով է: Պետք է աջակցենք, որ գերեզմատունը շուտ սկսի գործել:

Ամփոփում (Ավետիք Համբարձումյան)

Շնորհակալություն բոլորին մասնակցության համար: Հանրային քննարկումն ավարտվեց:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն **Արման Քոչարյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտագործման բաժնի պետ **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**